վիկի վրայ: Մտաբերում էի, թէ ինչպէս նա միջօրէի սաստիկ տօթի ժամանակ, ծառերի ճիւղերի վրայ բարձրացած, նախշում էր խնձորները, մտաբերում էի, թէ ինչպէս գիշերային լռութեան ժամանակ, լսելով մօր ձայնը, նա ցած իջաւ կտուրից, տարաւ, հանգստացրեց դժբախտ մօրը, մտաբերում էի, թէ ինչպէս առաւօտեան, երբ մարդիկ դեռ նոր էին զարթել, իսկ նա վերադառնում էր հեռաւոր աղբիւրից, մտաբերում էի նրա սրտագին խօսակցութիւնը, եւ վերջապէս՝ կոտրած սանդրը... եւ ամաչում էի Ասլանից, հանել այդ թանկագին յիշատակը, նայել, երկա՜ր նայել նրա վրա... Այդ բոլոր յիշողութիւնները, որոնց մէջ փայլում էր կայտառ աղջկայ սիրտն ու հոգին, պատկերացնում էի իմ մտքի մէջ, եւ համեմատութիւն էի անում նրա, Մարօի եւ Սօնայի մէջ...

Այդ համեմատութիւնը երկար զբաղեցրեց ինձ, մինչեւ հեռուից, նուրբ մշուշի մէջ, նշմարեցի Կտուց կղզին: Սկսեալ երեխայութիւնից, այնքան զարմանալի պատմութիւններ էի լսել այդ կղզու անապատականների մասին, որ ցանկանում էի շուտ տեսնել նրանց, համբուրել նրանց սուրբ աջը եւ առնել նրանց փրկարար օրհնութիւնը: Լսել էի, թէ ինչպէս նրանք իրանց փիլոնները տարածում էին այդ ծովի ալիքների վրայ, կատաղած ալիքները իսկոյն հանդարտւում էին, եւ նրանք նստում էին փիլոնի վրայ, որը, որպէս մի ամրակազմ լաստափայտ, լողում էր ջրի երեսին եւ տանում էր սուրբ հայրերին, որտեղ որ նրանք ցանկանում էին: Լսել էի, թէ ինչպէս նրանք մօտենում էին իրանց կղզու ափերին, կանչում էին, եւ ձկները, նրանց ձայնը լսելով, ուրախուրախ վազում էին դէպի եզրը, եւ նրանք ձեռքերը մեկնում, բռնում էին ձկներին, նայում էին նրանց վրայ, զարմանամ էին եւ կրկին թողնում էին ջրերի մէջ ազատ ու անհոգ ապրելու: Վերջապէս, ի՜նչ հրաշալիք ասես չէի լսել նրանց մասին եւ, այդ բոլորը մտաբերելով, իմ սիրտը լցւում էր սրբազան ջերմեռանդութեամբ, եւ ես ինձ անչափ երջանիկ էի համարում, որ պիտի տեսնեմ սուրբ հայրերին:

Նաւաստին, երեւի, ոչ մի բանի վրայ չէր մտածում, նա նիրհում էր: Թիկն տոած նաւակի կողքին, պառկել էր նա եւ երբեմն, քնի միջից, մեքենաբար շարժում էր թիակը, որ ձեռքից բաց չէր թողել: Հնազանդ նաւակը գիտէր իր գործը, գնում էր նոյն ուղղութեամբ, որ սկզբից նրա տէրը նախագծել էր նրա համար: Ծովը խաղաղ էր:

Բայց խաղաղութիւնը երկար չտեւեց: Հարաւային քամին, որ սկսեց փչել արեւի ծագելուց յետոյ, սկզբում մեղմ էր, հետզհետէ սաստկացաւ: Ծովի հանդարտ մակերեւոյթը սկսեց յուզել: Նաւաստին չէր նկատում այդ փոփոխութիւնը, նա, դեռ աչքերը խփած, շարժում էր ձեռքերը, որպէս յոգնած,